ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «29» 04 2024թ № 1154-Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1081-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի ապրիլի 1-ի N 289-Ա և N 290-Ա որոշումները՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի «Էկոնոմիկայի նախարարի տեղակալների կողմից համակարգվող գործունեության ոլորտները (բնագավառները) սահմանելու, նախարարի տեղակալների միմյանց փոխարինումը կազմակերպելու, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 461-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի փետրվարի 8-ի N 40-Ա հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1081-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Էկոնոմիկայի նախարարի տեղակալների միմյանց փոխարինումը կազմակերպել հետևյալ կերպ՝

1) Նարեկ Տերյան — Նարեկ Հովակիմյան
2) Արման Խոջոյան — Տաթևիկ Սարգսյան
3) Ռաֆայել Գևորգյան — նախարարի տեղակալներից մեկը՝ նախարարի հանձնարարությամբ: »

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2024 թվականի ապրիլի 29-ի
N 1154-Ա հրամանի
«Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի
սեպտեմբերի 6-ի
N 1081 -Ա հրամանի

Էկոնոմիկայի նախարարի տեղակալների կողմից համակարգվող գործունեության ոլորտների (բնագավառների)

1. Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը համակարգում է՝

Գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման, իր իրավասության սահմաններում տնտեսության ճյուղերի վարչական ռեգիստրի վարման, ազգային թվային գյուղատնտեսության հարթակների ստեղծման, պարենային անվտանգության և ապահովության, ագրովերամշակման, գյուղական համայնքների կայուն զարգացման, գյուղատնտեսության ոլորտում խորհրդատվության, տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական հողերի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական հողերի մշտադիտարկման, մելիորատիվ վիճակի բարելավման ու պահպանման, գյուղատնտեսության ապահովագրության, գյուղատնտեսությանը պետական աջակցության, օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների ու կազմակերպությունների հետ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության բնագավառները՝ նախարարության ագրովերամշակման, գյուղատնտեսական ծրագրերի նախագծման և գյուղատնտեսական ծրագրերի իրականացման, գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչությունների, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի միջոցով:

2. Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տաթևիկ Սարգսյանը համակարգում է՝

Բուսաբուծության, անասնաբուծության, սննդամթերքի անվտանգության, օրգանական գյուղատնտեսության, հավաստագրված սերմեր արտադրողների, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառները՝ նախարարության անասնաբուծության, բուսաբուծության, սննդամթերքի անվտանգության վարչությունների, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» և «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների, «Երկրագործության գիտական կենտրոն»,

«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն», «Գյումրիի սելեկցիոն կայան» և «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

3. էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը համակարգում է՝

Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն առևտրատնտեսական համագործակցության ապահովումը, ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրին առնչվող մասով դրույթների իրականացումը, Եվրամիության կողմից տրամադրվող ոլորտային աջակցության իրականացման ապահովումը, Հայաստանին տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP) արտոնյալ առևտրային ռեժիմի արդյունավետ իրականացումը և «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառումը, ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովումը, Եվրոպական հարևանության գործիքների ներքո իրականացվող ծրագրերի իրականացումը, Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համագործակցության ապահովումը, ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացումը, ՄԱԿ-ի տնտեսական կառույցների և մարմինների հետ համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացումը, միջազգային կազմակերպությունների հետ ոլորտային համագործակցության, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ միջազգային տնտեսական կապերի հաստատման, արտաքին շուկաների հասանելիության բարձրացման, արտահանման զարգացման քաղաքականության, արտահանման շուկաների հասանելիության ապահովման, միջազգային տնտեսական համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծման և զարգացման, արտահանման ուղղությամբ ֆինանսական վնասների ապահովագրության, երաշխիքների տրամադրման, արժեթղթերի թողարկման ու վարկերի ապահովագրության, ստանդարտացման և չափագիտության, որակի ենթակառուցվածքների զարգացման՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման, մակրոտնտեսական վերլուծությունների և հետազոտությունների բնագավառները՝ նախարարության Եվրամիության հետ տնտեսական համագործակցության, որակի ենթակառուցվածքի զարգացման, միջազգային համագործակցության, տնտեսական հետազոտությունների վարչությունների, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության, «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի արտահանման

ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

4. էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը համակարգում է՝

Գործարար միջավայրի և մրցակցային պայմանների բարելավման, ներդրումային քաղաքականության, ներքին շուկայի կանոնակարգման և տնտեսական մրցակցության պաշտպանության, ներքին շուկայի կանոնակարգման ու պաշտպանության քաղաքականության մշակման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի բարելավման, տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության և սպառողների իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման մեխանիզմների մշակման, ձեռներեցության զարգացման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության ոլորտային հարթակների ձևավորման, ձեռնարկատիրության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման, գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման, մտավոր սեփականության պահպանության և առևտրայնացման, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության, թեթև և ստեղծարար արդյունաբերության զարգացման (այդ թվում՝ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի մշակման և կիրառման), փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության, ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի զարգացման անհրաժեշտ շուկայական գործիքների և մեխանիզմների մշակման, տնտեսական երկարաժամկետ զարգացմանն ուղղված առաջին միջոցառման իրականացման բնագավառները՝ նախարարության գործարար միջավայրի, ձեռներեցության, գիտելիքահենք տնտեսության, թեթև արդյունաբերության, ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչությունների, Մտավոր սեփականության գրասենյակի, «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

5. էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը համակարգում է՝

Արդյունաբերության մրցունակության բարձրացման և զարգացման՝ արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման, թանկարժեք մետաղների բնագավառում քաղաքականության մշակման և իրականացման, տարածքային

տնտեսական զարգացման, զբոսաշրջության քաղաքականության մշակման, հանրային ներդրումների կառավարման բարելավման, պետություն-մասնավոր գործընկերության զարգացման, Հայաստանի Հանրապետությում և արտերկրում ներդրումային և պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի իրականացմանը պետական աջակցության, կանաչ և կայուն տնտեսական զարգացման, ներդրողների ներգրավման, ներդրումների ու ներդրողների պաշտպանության, ներդրումային ծրագրերի և ներդրողների հետներդրումային սպասարկման, միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականության մշակման, ԱՊՀ և Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության, առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի մշակման և իրականացման, արտաքին առևտրի խթանման, ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակման, սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման բնագավառները՝ նախարարության արդյունաբերության քաղաքականության, հանրային ներդրումների, ներդրումային ծրագրերի, ռազմավարական ոլորտների, առևտրի և ինտեգրացիայի վարչությունների, «Հայ-Ալմաստ» և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Հայաստանի Հանրապետության ռազմավարական զարգացման կենտրոն» հիմնադրամի միջոցով:»